<ՅՈՒՆԻԲԱՆԿ> ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ
2019Թ. ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Zoom հավելվածի օգնությամբ իրական ժամանակի ռեժիմում
երկուշաբթի, 29 հունիսի 2020թ., 12:20

Մասնակցեցին՝
Բաժնետերեր
12 բաժնետեր նիստի բացման պահին

Բանկի Խորհուրդ
Գագիկ Զաքարյան (նախագահ)
Գեորգի Պիսկով
Վարդան Աթայան

Բանկի Վարչություն
Մեսրոպ Հակոբյան (նախագահ)
Արարատ Ղուկասյան
Գոհար Գրիգորյան
Դավիթ Պետրոսյան
Արթուր Ապերյան

Հրավիրվածներ
ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչ Մանանա Աղիկյան
<Գրանթ Թորնթոն> աուդիտորական ընկերության ներկայացուցիչ Արմեն Հովհաննիսյան
<Ֆինարմ> ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիայի գործադիր տնօրեն Կարեն Զաքարյան
Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ Սերգեյ Քոչարյան, Լուսինե Խաչատրյան, Աննա Առաքելյան

Ժողովի նահագահ Գագիկ Զաքարյանը բացեց նիստը և ողջունեց բոլոր բաժնետերերին և հյուրերին: Ափսոսանք հայտնեց, որ կորոնավիրուսի հետ կապված հնարավորություն չկա անձամբ շնորհավորել միմյանց 2019 թվականի Բանկի հաջողությունների առիթով, և այս տարի ժողովը անցկացվում է օնլայն ռեժիմում՝ ելնելով միջոցառման մասնակիցների առողջության անվտանգության նկատառումներից:

Հաշվիչ հանձնաժողովի քարտուղար Աննա Բադոյանի հիվանդության պատճառով բացակայելու հետ կապված՝ Ժողովի քարտուղար նշանակվեց **Գոհար Գրիգորյանը**:
Գոհար Գրիգորյանը ներկայացրեց, որ 29.06.2020թ. <Յունիբանկ> ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի քվեարկությունն իրականացվել է քվեաթերթիկների միջոցով: Տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցանկը կազմված է 2020թ. մայիսի 15 դրությամբ:
Ժողովի գումարման հայտարարությունը պատշաճ կերպով տեղադրվել էր azdarar.am կայքում, ծանուցումները քվեարթերթիկների հետ միասին ուղարկվել էին բաժնետերերին փոստի միջոցով կամ հանձնվել են առձեռն: Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ լրացված քվեաթերթիկների ընդունումն ավարտվել է 29.06.2020թ.՝ մինչև Ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահը: Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը կազմվել է 29.06.2020թ.:

Բանկի տեղաբաշխված քվեարկող սովորական բաժնետոմսերի ձայների գումարային քանակը կազմում է 172.886.525 հատ, որից քվեարկությանը մասնակցել է 170.000.127 ձայնի իրավունք ունեցող բաժնետոմս, կամ այդ բաժնետոմսերի ընդհանուր թվաքանակի 98.33%-ը, և 32.010.000 հատ արտոնյալ բաժնետոմս, որոնք ունեն ձայնի իրավունք միայն օրակարգի 7-րդ հարցով, կամ այդ բաժնետոմսերի ընդհանուր թվաքանակի 100%-ը:
Քվորումն ապահովված է:

Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը ներկայացրեց, որ 2019 թվականին Բանկն արձանագրել է զգալի հաջողություններ՝ ապահովելով 1.3 մլրդ դրամի շահույթ, որը գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը 42%-ով: Շարունակելով ակտիվ աշխատանքները POS վարկավորման զարգացման ուղղությամբ՝ Յունիբանկը Հայաստանի բանկային շուկայում զբաղեցրեց առաջատար դիրք՝ վարկերի տրամադրման 71 մլրդ դրամի ծավալով: 24% աճ է արձանագրվել փոքր և միջին բիզնեսին տրամադրած վարկերի քանակով, որոնց պորտֆելը գերազանցել է 27 մլրդ դրամը: Բանկն ակտիվ զարգացրել է նաև քարտային բիզնեսը և արժանացել Visa միջազգային վճարային համակարգի մրցանակի <Largest Visa Issuance in Armenia> անվանակարգում՝ Հայաստանում Visa թողարկված քարտերի թվով առաջատար դիրքի համար: **Գագիկ Զաքարյանը** հիշատակեց Բանկի մասնաճյուղային ցանցի ընդլայնման և Երևանում ու մարզերում 5 նոր մասնաճյուղերի բացման, Յունիբանկի պարտատոմսերի երկու տրանշերով հաջող տեղաբաշխման մասին, ինչը վկայում է Յունիբանկի նկատմամբ բնակչության վստահության մասին: Նշեց, որ Բանկը շարունակում է հետագա ակտիվ զարգացումը՝ հաշվի առնելով կորոնավիրուսի համավարակի հետ կապված իրավիճակը, մշտապես կատարելագործում է բջջային հավելվածը և առցանց սպասարկումը՝ հաճախորդներին ընձեռելով առանց Բանկ այցելելու բոլոր ծառայություններից օգտվելու հնարավորություն:

Բանկի Խորհրդի անունից **Գագիկ Զաքարյանը** հաջողություններ մաղթեց բոլորին, համոզմունք հայտնեց հետագա արդյունավետ համագործակցության վերաբերյալ, շնորհակալություն հայտնեց Բանկի աշխատակիցներին՝ թիմային աշխատանքի և նվիրվածության համար:
Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը խոսքը փոխանցեց Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանին՝ 2019 թվականին կատարած աշխատանքների վերաբերյալ Վարչության հաշվետվությունը ներկայացնելու համար:

Հարց 1. <Յունիբանկ> ԲԲԸ 2019թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվության հաստատում

Վարչության նախագահ-գործադիր տնօրեն Մեսրոպ Հակոբյանը ներկայացրեց <Յունիբանկ> ԲԲԸ 2019թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվությունը: Նշեց, որ Յունիբանկը պահպանել է առանցքային ֆինանսական ցուցանիշների զարգացման դրական դինամիկան և առաջընթաց է գրանցել ռազմավարական ուղղություններով: Առավել մեծ ուշադրություն է դարձվել բիզնես գործընթացների արդյունավետությանը, ակտիվների որակի բարելավմանը, ռիսկ մենեջմենթի համակարգի կատարելագործմանը:
Տարվա առանցքային իրադարձությունների թվում առանձնացրեց՝ Բանկի ներկայության աշխարհագրության ընդլայնումը և հինգ նոր մասնաճյուղերի բացումը, Աստանա Միջազգային Ֆինանսական Կենտրոնի հարթակում մասնաճյուղի բացման աշխատանքների մեկնարկը, Մոսկվայի բորսայում Յունիբանկի արժեթղթերի շրջանառության վերաբերյալ պայմանագրի ստորագրումը, արհեստական բանականության կիրառմամբ անգրավ սպառողական վարկերի գծով վարկային սքորինգի թարմացումը, հաճախորդների արտաքին տնտեսական գործունեության զարգացմանն օժանդակելու նպատակով արտասահմանյան մի շարք հայտնի բանկերի հետ թղթակցային հարաբերությունների հաստատումը, բջջային հավելվածի կատարելագործման շնորհիվ սպասարկման թվային հարթակի օգտատերերի թվի էական աճը, PCI DSS և ISO 27001:2013 ստանդարտներով վերահավաստագրումը:
Մեսրոպ Հակոբյանը ամփոփ ներկայացրեց ֆինանսական ցուցանիշները, կորպորատիվ և մանրածախ բիզնեսի ոլորտում ձեռքբերումները, վերահսկող մարմինների հետ փոխգործակցությունը:
Ներկայացնելով 2020թ. ռազմավարական առաջնահերթությունները՝ **Մեսրոպ Հակոբյանը** նշեց, որ կորոնավիրուսի համավարակի ֆոնին վերջին ամիսների իրադարձությունները փոփոխել են Բանկի հետագա զարգացման խնդիրներն ու առաջնահերթությունները, և Բանկի ղեկավարությունը վերանայում է տարեկան կանխատեսումները՝ վերլուծելով Յունիբանկի զարգացման տարբեր սցենարներ:

Ավարտելով ելույթը՝ **Մեսրոպ Հակոբյանը** շնորհակալություն հայտնեց միջոցառման բոլոր մասնակիցներին, երախտագիտություն հայտնեց Բանկի բաժնետերերին, գործընկերներին և հաճախորդներին՝ վստահության և աջակցության համար, Յունիբանկի աշխատակիցների թիմին՝ պրոֆեսիոնալ և համախմբված աշխատանքի համար:
Մեսրոպ Հակոբյանը դիմեց ներկաներին հարցեր ներկայացնելու առաջարկությամբ:
Լսարանի կողմից հարցեր չներկայացվեցին:

Բաժնետերերի ժողովը հաստատեց <Յունիբանկ> ԲԲԸ 2019թ. գործունեության վերաբերյալ Վարչության հաշվետվությունը քվեարկության հետևյալ արդյունքներով՝
կողմ՝ 170.000.127 ձայն կամ մասնակիցների ձայների 98.33%

դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Հարց 2. <Յունիբանկ> ԲԲԸ 2019թ. ֆինանսական հաշվետվությունների հաստատում: <Յունիբանկ> ԲԲԸ 2019թ. ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ <Գրանթ Թորնթոն> աուդիտորական ընկերության եզրակացության ներկայացում

Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - գլխավոր հաշվապահ Գոհար Գրիգորյանը ներկայացրեց Խորհրդի կողմից նախնական հաստատված ըստ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կազմված Բանկի 2019 թվականի տարեկան հաշվետվությունները հետևյալ հիմնական ցուցանիշներով.

1. դրամական միջոցներ և դրանց համարժեքներ՝ 49,575,707 հազ ՀՀ դրամ
2. պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ՝ 23,298,518 հազ ՀՀ դրամ
3. հաճախորդներին տրված վարկեր և այլն փոխատվություններ՝ 141,401,217 հազ ՀՀ դրամ
4. իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր՝ 3,353,992 հազ ՀՀ դրամ
5. ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր՝ 14,416,575 тыс драм РА
6. հիմնական միջոցներ՝ 9,537,627 հազ ՀՀ դրամ
7. ոչ նյութական ակտիվներ՝ 1,933,759 հազ ՀՀ դրամ
8. այլ ակտիվներ՝ 5,497,108 ՀՀ դրամ
9. ընդամենը ակտիվներ՝ 249,015,415 հազ ՀՀ դրամ
10. պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ՝ 7,387,238 հազ ՀՀ դրամ
11. պարտավորություններ հաճախորդների նկատմամբ՝ 189,738,550 ՀՀ դրամ
12. ածանցյալ ֆինանսական պարտավորություններ՝ 21,150 հազ ՀՀ դրամ
13. փոխառություններ՝ 5,907,632 հազ ՀՀ դրամ
14. թողարկված պարտքային արժեթղթեր՝ 9,523,655 հազ ՀՀ դրամ
15. ընթացիկ հարկի գծով պարտավորություն՝ 305,561 հազ ՀՀ դրամ
16. հետաձգված հարկային պարտավորություն՝ 298,151 հազ ՀՀ դրամ
17. այլ պարտավորություններ՝ 2,007,732 հազ ՀՀ դրամ
18. ընդամենը պարտավորություններ՝ 215,189,669 հազ ՀՀ դրամ
19. բաժնետիրական կապիտալ՝ 20,489,653 հազ ՀՀ դրամ
20. էմիսիոն եկամուտ՝ 9,605,638 հազ ՀՀ դրամ
21. գլխավոր պահուստ՝ 508,876 հազ ՀՀ դրամ
22. այլ պահուստներ՝ 1,503,755 հազ ՀՀ դրամ
23. չբաշխված շահույթ՝ 1,717,824 հազ ՀՀ դրամ
24. ընդամենը՝ սեփական կապիտալ՝ 33,825,746 հազ ՀՀ դրամ

Բանկի եկամուտների և ծախսերի կառուցվածքը 2019 թվականի ընթացքում՝

- զուտ տոկոսային եկամուտներ՝ 10,136,153 հազ ՀՀ դրամ
- կոմիսիոն եկամուտներ՝ 2,251,099 հազ ՀՀ դրամ
- կոմիսիոն ծախսեր՝ (543,896) հազ ՀՀ դրամ
- զուտ կոմիսիոն եկամուտներ՝ 1,707,203 հազ ՀՀ դրամ

- զուտ առևտրային եկամուտ՝ 1,979,686 հազ ՀՀ դրամ
- այլ եկամուտներ՝ 679,124 հազ ՀՀ դրամ
- ակտիվների արժեզրկման ծախս՝ (3,703,851) հազ ՀՀ դրամ
- անձնակազմի գծով ծախսեր՝ (4,539,655) հազ ՀՀ դրամ
- հիմնական միջոցների մաշվածություն՝ (867,630) հազ ՀՀ դրամ
- ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա՝ (119,231) հազ ՀՀ դրամ
- այլ օպերացիոն ծախսեր՝ (3,644,103) հազ ՀՀ դրամ
- շահույթ մինչև հարկումը՝ 1,627,696 հազ ՀՀ դրամ
- տարվա շահույթ՝ 1,326,981 հազ ՀՀ դրամ

<Յունիբանկ> ԲԲԸ-ի դրամական հոսքերը 2019 թվականին՝

- դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները՝ 5,703,428 հազ ՀՀ դրամ
- գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր՝ 20,374,468 հազ դրամ
- դրամական զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից՝ (3,021,215) հազ ՀՀ դրամ
- զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից՝ 121,155 հազ ՀՀ դրամ
- դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ՝ 17,232,098 հազ ՀՀ դրամ
- արտարժույթի փոխանակման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա՝ 279,911 հազ ՀՀ դրամ
- ակնկալվող պարտքային կորուստների ազդեցությունը՝ 14,691 հազ ՀՀ դրամ
- դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ՝ 32,049,007 հազ ՀՀ դրամ
- դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ՝ 49,575,707 հազ ՀՀ դրամ

Գոհար Գրիգորյանը ներկայացրեց <Գրանթ Թորթոն> աուդիտորական ընկերության եզրակացությունը, համաձայն որի ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են <Յունիբանկ> ԲԲԸ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:

Գոհար Գրիգորյանը դիմեց ներկաներին հարցեր ներկայացնելու առաջարկությամբ:
Լսարանի կողմից հարցեր չներկայացվեցին:

Բաժնետերերի ժողովը <u>հաստատեց</u> <Յունիբանկ> ԲԲԸ 2019թ. ֆինանսական հաշվետվությունները քվեարկության հետևյալ արդյունքներով՝

կողմ՝ 170.000.127 ձայն կամ մասնակիցների ձայների 98.33%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Հարց 3. 2019թ. Ներքին աուդիտի հաշվետվության հաստատում: <Յունիբանկ> ԲԲԸ ներքին հսկողության համակարգի վերաբերյալ Ներքին աուդիտի եզրակացության ներկայացում

Ներքին աուդիտի տնօրեն Հայկ Սուվարյանը ներկայացրեց ըստ տարեկան աշխատանքային ծրագրի և արտապլանային աուդիտորական ստուգումների ոլորտները: Տարվա ընթացքում ստուգվել է 18 մասնաճյուղ, որից թվով 13-ը ենթարկվել են համալիր ստուգման, իսկ թվով 5-ը՝ նպատակային ստուգման ըստ ոլորտների: Հայտնաբերված խնդիրների (տեղային բնույթի 42 խախտում, 9 համակարգային խախտում) լուծման նպատակով կազմվել են միջոցառումների ծրագրեր՝ պատասխանատու ստորաբաժանումների/անձանց և ժամկետների նշմամբ, հայտնաբերված խախտումների վերացման նկատմամբ իրականացվել է հետևողական վերահսկողություն:
Ըստ Ներքին աուդիտի եզրակացության, Բանկի ներքին հսկողության համակարգը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի սահմանած նվազագույն պահանջներին:

Հայկ Սուվարյանը դիմեց ներկաներին հարցեր ներկայացնելու առաջարկությամբ:
Լսարանի կողմից հարցեր չներկայացվեցին:

Բաժնետերերի ժողովը հաստատեց <Յունիբանկ> ԲԲԸ 2019թ. Ներքին աուդիտի հաշվետվությունը քվեարկության հետևյալ արդյունքներով՝
կողմ՝ 170.000.127 ձայն կամ մասնակիցների ձայների 98.33%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Հարց 4. <Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի անդամների ընտրություն և քանակական կազմի հաստատում

Մեսրոպ Հակոբյանը ներկայացրեց Խորհրդի անդամների ընտրության վերաբերյալ Խորհրդի հետևյալ առաջարկությունները՝

- <Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի քանակական կազմը թողնել անփոփոխ:
- Վերընտրել Խորհրդի անդամներ Գագիկ Զաքարյանին, Գեորգի Պիսկովին, Էդուարդ Զամանյանին, Հրահատ Արզումանյանին, Դավիթ Փափազյանին, Վարդան Աթայանին, Արտեմ Կոնստանդյանին:

Գագիկ Զաքարյան, Գեորգի Պիսկով՝ <Յունիբանկ> ԲԲԸ բաժնետեր <Uniholding GG Limited> ընկերության լիազոր ներկայացուցիչներ (սովորական անվանական բաժնետոմսերի քանակը՝ 147,805,227 հատ, արտոնյալ հաստատագրված բաժնետոմսերի քանակը՝ 32,010,000 հատ)
Էդուարդ Զամանյան՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում
Հրահատ Արզումանյան ՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում
Դավիթ Փափազյան՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում
Վարդան Աթայան՝ Բանկի բաժնետեր (սովորական անվանական բաժնետոմսերի քանակը՝ 5,483 հատ)
Արտեմ Կոնստանդյան՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում

Քվեարկության արդյունքներով թեկնածուները ստացել են ձայների հետևյալ քանակը՝
Գագիկ Զաքարյան՝ 24.289.440 ձայն

Գեորգի Պիսկով՝ 24.283.470 ձայն
Էդուարդ Զամանյան՝ 24.281.580 ձայն
Հրահատ Արզումանյան՝ 24.281.580 ձայն
Դավիթ Փափազյան՝ 24.281.580 ձայն
Վարդան Աթայան՝ 24.281.580 ձայն
Արտեմ Կոնստանդյան՝ 24.281.534 ձայն
Բոլոր թեկնածուների դեմ՝ 0 ձայն
Թեկնածուների գծով ձեռնպահ՝ 0 ձայն
Անվավեր՝ 19.363 ձայն կամ մասնակիցների ձայների 0.01%

Մեսրոպ Հակոբյանը դիմեց ներկաներին հարցեր ներկայացնելու առաջարկությամբ:
Լսարանի կողմից հարցեր չներկայացվեցին:

Բաժնետերերի ժողովը որոշում կայացրեց <Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի քանակական կազմը թողնել անփոփոխ, վերընտրել Խորհրդի անդամներ Գագիկ Զաքարյանին, Գեորգի Պիսկովին, Էդուարդ Զամանյանին, Հրահատ Արզումանյանին, Դավիթ Փափազյանին, Վարդան Աթայանին, Արտեմ Կոնստանդյանին և հաստատել Խորհուրդը հետևյալ կազմով՝ Գագիկ Զաքարյան, Գեորգի Պիսկով, Էդուարդ Զամանյան, Հրահատ Արզումանյան, Դավիթ Փափազյան, Վարդան Աթայան, Արտեմ Կոնստանդյան:

Հարց 5. <Յունիբանկ> ԲԲԸ 2019թ. ֆինանսական արդյունքներով տարեկան շահութաբաժինների վճարման որոշման ընդունում

Ժողովի նախագահ **Գագիկ Զաքարյանը** ներկայացրեց, որ Բանկի 2019թ. ֆինանսական գործունեության արդյունքներով, Բանկի Խորհրդի 14.05.2020թ. որոշմամբ առաջարկվում է սովորական բաժնետոմսերի գծով տարեկան շահութաբաժիններ չվճարել, ըստ ՀՀՄՍ 1.326.981 հազ. ՀՀ դրամի չափով զուտ շահույթն ուղղել Բանկի հեռանկարային զարգացմանը, գլխավոր պահուստին հատկացնել շահույթի 5%:

Գագիկ Զաքարյանը դիմեց ներկաներին հարցեր ներկայացնելու առաջարկությամբ:
Լսարանի կողմից հարցեր չներկայացվեցին:

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշում կայացրեց սովորական բաժնետոմսերի գծով տարեկան շահութաբաժիններ չվճարել, ըստ ՀՀՄՍ 1.326.981 հազ. ՀՀ դրամի չափով զուտ շահույթն ուղղել Բանկի հեռանկարային զարգացմանը, գլխավոր պահուստին հատկացնել շահույթի 5%՝

կողմ՝ 170.000.127 ձայն կամ մասնակիցների ձայների 98.33%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Հարց 6. <Յունիբանկ> ԲԲԸ 2020թ. ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն անցկացնող անձի հաստատում

Գոհար Գրիգորյանը ներկայացրեց, որ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, 2020թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության նպատակով Բանկի կողմից հայտարարվել էր մրցույթ, որին մասնակցության հայտ էր ներկայացրել <Գրանթ Թորնթոն> ՓԲ ընկերությունը: Մրցութային հանձնաժողովի՝ Բանկի Վարչության կողմից մրցույթն անցկացվել և արդյունքներն ամփոփվել են ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգով և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան: Մրցութային հանձնաժողովի որոշմամբ, մրցութային առաջարկի գնահատման արդյունքների հիման վրա հաղթող է ճանաչվել <Գրանթ Թորնթոն> ՓԲ ընկերությունը: 14.05.2020թ. Խորհրդի որոշմամբ, որպես <Յունիբանկ> ԲԲԸ 2020թ. ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն իրականացնող անձ Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացվում <Գրանթ Թորնթոն> ՓԲ ընկերությունը:

Ժողովի քարտուղարը դիմեց ներկաներին հարցեր ներկայացնելու առաջարկությամբ:
Լսարանի կողմից հարցեր չներկայացվեցին:

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշում կայացրեց հաստատել <Գրանթ Թորնթոն> ՓԲԸ միջազգային անկախ աուդիտորոկան կազմակերպությանը որպես <Յունիբանկ> ԲԲԸ 2020թ. արտաքին աուդիտն իրականացնող անձ՝

կողմ՝ 170.000.127 ձայն կամ մասնակիցների ձայների 98.33%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Հարց 7. 25.03.2020թ. <Յունիբանկ> ԲԲԸ Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի որոշման և <Յունիբանկ> ԲԲԸ Կանոնադրության մեջ փոփոխությունների հաստատում

Վարչության նախագահի տեղակալ, Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետբերման տնօրեն Օվսաննա Առաքելյանի բացակայության հետ կապված հարցը ներկայացրեց **Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետբերման տնօրենի տեղակալ – դատաիրավական աշխատանքների դեպարտամենտի տնօրեն Նուրիջան Կիրակոսյանը:** Ներկայացրեց, որ 14.05.2020թ. Խորհրդի որոշման համաձայն, առաջարկվում է փոփոխություններ կատարել 25.03.2020թ. <Յունիբանկ> ԲԲԸ Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի որոշման մեջ՝ արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի լիազորությունները հստակեցնելու անհրաժեշտությամբ պայմանավորված, և առաջարկեց հետևյալ փոփոխությունները կատարել Բանկի Կանոնադրության կետերում՝ վերաշարադրել Կանոնադրության 4-րդ գլխի 4.1 կետը, հեռացնել 4.7 կետը, վերաշարադրել 5-րդ գլխի 5.4, 5.5 կետերը, 6-րդ գլխի 6.7 կետը, 7-րդ գլխի 7.5, 7.6 կետերը, 7.10 կետի առաջին նախադասությունը և ա) ենթակետը, 8-րդ գլխում ավելացնել 8.7 կետը, վերաշարադրել 10-րդ գլխի 10.25 կետը, 10.1 գլխի 10.1.1 կետի թ) ենթակետը, վերաշարադրել 11-րդ գլխի 11.13 կետի վերջին նախադասությունը և 11.18 կետը:

Նուրիջան Կիրակոսյանը ներկայացրեց նաև, որ 14.05.2020թ. Խորհրդի որոշման համաձայն, առաջարկվում է «Յունիբանկ» ԲԲԸ Կանոնադրության փոփոխությունները ՀՀ Կենտրոնական

բանկի կողմից գրանցելուց հետո թողարկել 4,778,261 /չորս միլիոն յոթ հարյուր յոթանասունութ հազար երկու հարյուր վաթսունմեկ/ հատ Բ դասի լրացուցիչ փոխարկվող արտոնյալ բաժնետոմս 27% հաստատագրված տարեկան շահութաբաժնով, յուրաքանչյուրը 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ անվանական արժեքով՝ բաց բաժանորդագրության միջոցով տեղաբաշխմամբ:

Նուրիջան Կիրակոսյանը դիմեց ներկաներին առաջարկվող փոփոխությունները մանրակրկիտ ներկայացնելու անհրաժեշտության հարցով: Հաշվի առնելով, որ փոփոխությունները մանրամասն նկարագրված են բաժնետերերին տրամադրված նյութերում՝ **Գագիկ Զաքարյանն** առաջարկեց դրանց վրա կանգ չառնել:

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշում կայացրեց հաստատել 25.03.2020թ. <Յունիբանկ> ԲԲԸ Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի որոշման և <Յունիբանկ> ԲԲԸ Կանոնադրության մեջ փոփոխությունները, «Յունիբանկ» ԲԲԸ Կանոնադրության փոփոխությունները ՀՀ Կենտրոնական բանկի կողմից գրանցելուց հետո թողարկել 4,778,261 /չորս միլիոն յոթ հարյուր յոթանասունութ հազար երկու հարյուր վաթսունմեկ/ հատ Բ դասի լրացուցիչ փոխարկվող արտոնյալ բաժնետոմս 27% հաստատագրված տարեկան շահութաբաժնով, յուրաքանչյուրը 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ անվանական արժեքով՝ բաց բաժանորդագրության միջոցով տեղաբաշխմամբ.

կողմ՝ 170.000.127 ձայն կամ սովորական բաժնետոմսերի մասնակիցների ձայների 98.33%,
32.010.000 ձայն կամ արտոնյալ բաժնետոմսերի մասնակիցների 100%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Հարց 8. <<Յունիբանկ> ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ> և <<Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի կանոնակարգ> ներքին իրավական ակտերում փոփոխությունների հաստատում

Նուրիջան Կիրակոսյանը ներկայացրեց, որ 14.05.2020թ. Խորհրդի որոշման համաձայն, առաջարկվում է փոփոխություններ կատարել <<Յունիբանկ> ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ> և <<Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի կանոնակարգ> ներքին իրավական ակտերում՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի և «Յունիբանկ» ԲԲԸ Կանոնադրության պահանջներին դրանց դրույթները համապատասխանեցնելու նպատակով: Մասնավորապես առաջարկվում է՝ <<Յունիբանկ> ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ>-ում 2-րդ գլխի 2.1.9 կետը և 4-րդ գլխի 4.2 կետը, իսկ <<Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի կանոնակարգ>-ում 2-րդ գլխի 2.8, 2.10, 2.11, 2.16, 2.17.20, 2.17.32 կետերը, 3-րդ գլխի 3.8 կետը վերաշարադրել նոր խմբագրությամբ:

Նուրիջան Կիրակոսյանը պատրաստակամություն հայտնեց բաժնետերերի հարցերին պատասխանելու վերաբերյալ:

Լսարանի կողմից հարցեր չներկայացվեցին:

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշում կայացրեց հաստատել <<Յունիբանկ> ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ> և <<Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի կանոնակարգ> ներքին իրավական ակտերում փոփոխությունները՝

կողմ՝ 170.000.127 ձայն կամ մասնակիցների ձայների 98.33%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Գոհար Գրիգորյանը հայտարարեց, որ Ժողովի օրակարգի բոլոր հարցերը քննարկված են, դրանց հետ կապված որոշումներն ընդունված են:

Ժողովի ավարտին **Մեսրոպ Հակոբյանը** նշեց, որ Բանկը շարունակում է աշխատանքը պարետի որոշումների պահպանմամբ, արժանացել է Կառավարության ուշադրությանը որպես օրինակելի բանկ վարակի տարածման կանխարգելիչ միջոցառումների իրականացման և հեռավար սպասարկման կազմակերպման ու հերթերի կարգավորման ուղղությամբ արդյունավետ լուծումների կիրառման տեսանկյունից: 2020 թվականի 1-ին կիսամյակի արդյունքներով, Բանկը կատարել է շահույթի գծով պլանը, և Խորհրդի առաջիկա նիստում կքննարկվեն 2020թ. Բիզնես պլանում կատարվելիք փոփոխությունները՝ հաշվի առնելով տնտեսական զարգացման հնարավոր հեռանկարները:
Բարձր գնահատեց անձնակազմի թիմային աշխատանքը, նշելով, որ այն շարունակում է սպասարկել հաճախորդներին առաջատար դիրքերում:

Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը շնորհակալություն հայտնեց միջոցառման մասնակիցներին՝ համոզմունք հայտնելով, որ ճգնաժամը կհաղթահարվի և Բանկի ղեկավարությունը հնարավորություն կունենա հանդիպելու բաժնետերերի հետ տարբեր միջոցառումների շրջանակներում:

Բաժնետերերի ժողովն ավարտվեց ժամը 13:10-ին:

Գագիկ Զաքարյան **Նախագահ**	**Գոհար Գրիգորյան** **Քարտուղար**

ք. Երևան, 01 հուլիսի 2020թ.